***Կարգապահական գործ թիվ ԿԳ-23010***

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**ՓԱՍՏԱԲԱՆ ՄԱՄԻԿՈՆ ԷԴՈՒԱՐԴԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Վահագն Քեշիշյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի և Կարինե Բաղդասարյանի, կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ փաստաբան Մամիկոն Մանուկյանի,

քննության առնելով փաստաբան Մամիկոն Էդուարդի Մանուկյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան)** (արտոնագիր՝ թիվ 349), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Երջանիկ Հովակիմյանի (այսուհետ՝ նաև Դիմող) ներկայացուցիչ փաստաբան Աշոտ Աթաբեկյանը, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (այսուհետ՝ նաև Պալատ), հայտնել է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում քննվում է թիվ ԵԴ/19100/02/22 քաղաքացիական գործն ըստ հայցի՝ Անժելա Արամի Մելոյանի, Ալինա Գագիկի Հովակիմյանի (այսուհետ նաև՝ Հայցվորներ) (ներկայացուցիչ՝ փաստաբան Մամիկոն Մանուկյան) ընդդեմ Երջանիկ Հովակիմյանի (այսուհետ նաև՝ Պատասխանող) (ներկայացուցիչ՝ փաստաբան Աշոտ Աթաբեկյան) 18.10.2019 թվականի հայտարարության նկատմամբ առոչինչ գործարքի անվավերության հետևանք կիրառելու՝ Երևան քաղաքի Դրոյի 56 տան 5/6 բաժնի

նկատմամբ Պատասխանողի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դիմումի համաձայն՝ մինչ հայցադիմումի ներկայացումը փաստաբան Մամիկոն Մանուկյանը իր գրասենյակում մի քանի անգամ ընդունել է Հայցվորներին ու Պատասխանողին և տրամադրել է խորհրդատվություն, որի բովանդակությունը եղել է հետևյալը. «Անժելա Մելոյանը և Ալինա Հովակիմյանը իրենց ժառանգությունից պետք է հրաժարվեին հօգուտ Երջանիկ Հովակիմյանի, որից հետո Երջանիկ Հովակիմյանը վերջիններիս հասանելիք բաժինը պետք է վերադարձներ՝ ինքնակամ շինությունները օրինականացնելուց հետո»:

Դիմումի համաձայն՝ նշվածը հաստատվում է թիվ ԵԴ/19100/02/22 քաղաքացիական գործով 12.09.2022 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում: Մասնավորապես, Հայցվորների ներկայացուցիչ փաստաբան Մամիկոն Մանուկյանը հայտնել է. «Ավելին ասեմ, էս գործարքի կատարման հետ կապված քննարկումները եղել են իմ ներկայությամբ, ժառանգությունից հրաժարվելու հօգուտ Երջանիկ Հովակիմյանի, որ հետո օրինականացնեն, հետո կվերադարձնեն, իմ օֆիսում, իմ ներկայությամբ ա եղել: Մի երկու ամիս իրար հետ դիմումը տալուց հետո էլ քննարկումներն արվել ա, վերջնական ձևակերպումը տրվել ա նոտարի մոտ: (...) նա պարտավորվել էր, որ պետք է վերադարձներ, իր պարտականությունները չի կատարել: ... Հրաժարվել են ակնկալիքով, որը մենք բացահայտ հայտարարում ենք, և ասում եմ, որ բոլոր գործողությունները իմ ներկայությամբ ա կատարվել»:

Դիմումի համաձայն՝ փաստաբան Մամիկոն Մանուկյանի կողմից Հայցվորներին և Պատասխանողին խորհրդատվության տրամադրումը (խորհրդատվության բովանդակությունը) հանդիսանում է փաստաբանական գաղտնիք: Փաստաբան Մամիկոն Մանուկյանը, հետագայում վերցնելով Հայցվորների հանձնարարությունը, Պատասխանողի դեմ ներկայացրել է հայցադիմում՝ 18.10.2019 թվականի հայտարարության նկատմամբ առոչինչ գործարքի անվավերության հետևանք կիրառելու Երևան քաղաքի Դրոյի 56 տան 5/6 բաժնի նկատմամբ Պատասխանողի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Դիմումի համաձայն՝ եթե փաստաբան Մամիկոն Մանուկյանի դատական նիստին արված հայտարարությունները համապատասխանում են իրականությանը, ապա Երջանիկ Հովակիմյանը Փաստաբանի վարքագծի կանոնագրքի իմաստով հանդիսացել է վերջինիս վստահորդը, քանի որ Երջանիկ Հովակիմյանը տեղեկատվություն է տրամադրել այն մասին, որ ժառանգությունն ամբողջությամբ ընդունելուց հետո Հայցվորների բաժինները վերադարձնելու է իրենց:

Նշվածի հաշվառմամբ, Դիմողը խնդրել է փաստաբանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Հանձնաժողովի նիստին Դիմողը չի ներկայացել:

**2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>**

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Մամիկոն Մանուկյանին առաջարկվել է մինչև 2023 թվականի փետրվարի 8-ը ներկայացնել բացատրություն Երջանիկ Հովակիմյանի դիմումի վերաբերյալ:

Փաստաբանը 2023 թվականի փետրվարի 7-ին ներկայացված բացատրությամբ հայտնել է, որ Ալինա Հովակիմյանին ճանաչում է 1990-ական թվականներից, նա եղել է իր ուսանողուհին, երբ ինքը դասավանդում էր ՈՒրարտու համալսարանում, հրավիրած է եղել նրա հարսանիքին, որտեղ էլ ծանոթացել է նաև Երջանիկ Հովակիմյանի հետ: Տարիների ընթացքում անհրաժեշտության դեպքում, առանց որևէ իրավաբանական օգնություն մատուցելու պայմանագիր կնքելու, իրեն դիմել է նաև Երջանիկ Հովակիմյանը տարբեր տեսակի իրավական հարցերով և ստացել տարաբնույթ իրավական խորհրդատվություն:

Փաստաբանը հայտնել է նաև, որ իր վստահորդներ՝ Անժելա Մելոյանի և նրա դստեր Ալինա Հովակիմյանի անունից 18.10.2019թ.-ի հայտարարությունն անվավեր ճանաչելու և որպես հետևանք ՀՀ, ք. Երևան, Դրոյի փող., թիվ 56 տան 5/6 բաժնի նկատմամբ Երջանիկ Հովակիմյանի սեփականության իրավունքի գրանցումն անվավեր ճանաչելու պահանջներով հայց է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Երջանիկ Հովակիմյանի: Իր վստահորդները հանդիսանում են թիվ ԵԴ/19100/02/22 քաղաքացիական գործը պատասխանող՝ Երջանիկ Հովակիմյանի հարազատ եղբոր Գագիկ Հովակիմյանի (մահացել է 17.08.2019թ.–ին) կինն ու դուստրը: Մինչև կողմերի միջև դատական վեճ ծագելը նախորդել են որոշակի հանգամանքներ:

Փաստաբանը նշել է, որ 2019թ.-ի սեպտեմբերին Անժելա Մելոյանը և Ալինա Հովակիմյանը, այցելել են իր աշխատավայր՝ Գագիկ Հովակիմյանի ժառանգությունը գրանցելու հետ կապված հարցերը քննարկելու համար: Ներկայացվել է, որ ժառանգական զանգվածի ՀՀ, ք. Երևան, Դրոյի փող., տուն 56 հասցեի անշարժ գույքում առկա են ինքնակամ շինություններ: Դրանք փաստացի բաժանված են, սակայն անհրաժեշտ էր դիմել պատկան մարմիններին դրանց կարգավիճակը որոշելու համար:

Փաստաբանի պնդմամբ, Անժելա Մելոյանը և Ալինա Հովակիմյանը իրեն տեղեկացրել են այն մասին, որ Երջանիկ Հովակիմյանը, պատրաստակամություն է հայտնել միջոցներ ձեռնարկել ինքնակամ շինությունների կարգավիճակը որոշելու, այդ հարցը կարգավորելու համար: Նշվածի կապակցությամբ, հետագայում կազմակերպվել է հանդիպում Փաստաբանի աշխատավայրում՝ Անժելա Մելոյանի, Ալինա Հովակիմյանի, նրա ամուսնու՝ Արթուր Սիմիկյանի, ինչպես նաև Երջանիկ Հովակիմյանի մասնակցությամբ: Նրանց հետաքրքրող հացի շուրջ տեղի են ունեցել քննարկումներ և վերջնական որոշվել է, որ Անժելա Մելոյանն ու Ալինա Հովակիմյանը կհրաժարվեն իրենց ժառանգական զանգվածից հօգուտ Երջանիկ Հովակիմյանի, վերջինս կձեռնարկի միջոցներ անշարժ

գույքում առկա բոլոր ինքնակամ շինություններն օրինականացնելու համար և օրինականացումից հետո Անժելա Մելոյանի ու Ալինա Հովակիմյանի բաժնեմասերը կվերագրանցի (կվերադարձնի) նրանց:

Փաստաբանը հավելել է, որ ի սկզբանե, երբևիցե Երջանիկ Հովակիմյանի հետ իրավաբանական ծառայության մատուցման պայմանագիր չի կնքել, նա երբեք իր վստահորդը չի եղել, իսկ առանձին հարցերով իր կողմից տրված խորհրդատվությունը միշտ եղել է բանավոր, որոնք իրենց համար որևէ իրավական հետևանքներ չեն առաջացրել:

Փաստաբանի պնդմամբ, հերթական նախնական դատական նիստի ընթացքում այս կոնտեքստում քննարկում է տեղի ունեցել կողմերի միջև, և Դիմողը՝ նույն ձևով ընկալելով ներկայացրած փաստերը, բանավոր, դիմումի տեքստին համահունչ, կարծիք է հայտնել, սակայն նախագահող դատավորը նույնպես նրան սաստել է և կարծիք հայտնել, որ Փաստաբանի կողմից ներկայացված փաստերը հիմք չեն նման կարծիք հայտնելու և իրավական գնահատական տալու համար:

Վերոգրյալի հաշվառմամբ, Փաստաբանը խնդրել է մերժել կարգապահական վարույթի հարուցումը:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Փաստաբանն ըստ էության պնդել է իր նախկինում ներկայացված դիրքորոշումը:

**3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 23.02.2023թ. թիվ 52-Ա/ԿԳ-23010 որոշմամբ փաստաբան Մամիկոն Մանուկյանի նկատմամբ «Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) **19-րդ հոդվածի 2-րդ կետի**, **20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» և «դ» ենթակետերի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 3.2.2, 3.2.6, 3.2.7 և 3.2.8 ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

28.02.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

**3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>**

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

**4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>**

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 28.04.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված չի համարվել Երջանիկ Հովակիմյանի՝ Մամիկոն Մանուկյանի վստահորդը հանդիսանալու վերաբերյալ փաստը, Երջանիկ Հովակիմյանին, Անժելա Մելոյանին և Ալինա Հովակիմյանին Մամիկոն Մանուկյանի կողմից միևնույն հարցի վերաբերյալ իրավաբանական օգնություն ցույց տալու, անբարեխիղճ արտոնություն ստեղծելու, ինչպես նաև Երջանիկ Հովակիմյանի կողմից հայտնած փաստաբանական գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն տիրապետելու հանգամանքները:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 28.04.2023թ.:

Հանձնաժողովի նիստը տեղի է ունեցել 22.06.2023թ. ժամը 19:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

**5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>**

**Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

– Փաստաբան Մամիկոն Մանուկյանը ստանձնել է Անժելա Մելոյանի և Ալինա Հովակիմյանի շահերի պաշտպանությունը: Սույն փաստը հաստատվում է լիազորագրի, հայցադիմումի և իրավաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրերի պատճեներով, ինչպես նաև կողմերի բացատրություններով:

– Փաստաբան Մամիկոն Մանուկյանը շարունակում է ներկայացնել Անժելա Մելոյանի և Ալինա Հովակիմյանի շահերը: Սույն փաստը հաստատվում է Փաստաբանի կողմից ներկայացված 14.04.2023թ. գրությամբ:

– 12.09.2022 թվականին կայացած նախնական դատական նիստի ընթացքում Անժելա Մելոյանի և Ալինա Հովակիմյանի ներկայացուցիչ փաստաբան Մամիկոն Մանուկյանը հայտնել է. «Ավելին ասեմ, էս գործարքի կատարման հետ կապված քննարկումները եղել են իմ ներկայությամբ, ժառանգությունից հրաժարվելու հօգուտ Երջանիկ Հովակիմյանի, որ հետո օրինականացնեն, հետո կվերադարձնեն, իմ օֆիսում, իմ ներկայությամբ ա եղել: Մի երկու ամիս իրար հետ դիմումը տալուց հետո էլ քննարկումներն արվել ա, վերջնական ձևակերպումը տրվել ա նոտարի մոտ: (...) նա պարտավորվել էր, որ պետք է վերադարձներ, իր պարտականությունները չի կատարել: ... Հրաժարվել են ակնկալիքով, որը մենք բացահայտ հայտարարում ենք, և ասում եմ, որ բոլոր գործողությունները իմ ներկայությամբ ա կատարվել»: Սույն փաստը հաստատվում է թիվ ԵԴ/19100/02/22 քաղաքացիական գործով 12.09.2022թ. դատական նիստի ձայնագրության կրիչով (ձայնային կրիչ, ժամ 11:46, 18-րդ վարկյան):

**Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի**

**եզրակացությունը, հաստատված չի համարում հետևյալ փաստերը.**

– Երջանիկ Հովակիմյանի՝ Մամիկոն Մանուկյանի վստահորդը հանդիսանալու վերաբերյալ փաստը հաստատված չի համարվում, *քանի որ գործում առկա չէ որևէ ապացույց առ այն, որ Երջանիկ Հովակիմյանը դիմել է Փաստաբան Մամիկոն Մանուկյանին՝ ք. Երևան, Դրոյի փողոց, տուն 56 հասցեում գտնվող գույքի վերաբերյալ իրավաբանական օգնություն ստանալու համար: Ավելին, նույնիսկ դիմողը իր կողմից ներկայացված դիմումում նման փաստ չի նշել:*

– Երջանիկ Հովակիմյանին, Անժելա Մելոյանին և Ալինա Հովակիմյանին Մամիկոն Մանուկյանի կողմից միևնույն հարցի վերաբերյալ իրավաբանական օգնություն ցույց տալու, անբարեխիղճ արտոնություն ստեղծելու, ինչպես նաև Երջանիկ Հովակիմյանի կողմից հայտնած փաստաբանական գաղտնիք հանդիսացող տեղեկատվություններ տիրապետելու հանգամանքները չեն հաստատվել:

**6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>**

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Մամիկոն Մանուկյանը փաստաբան է հանդիսանում 16.03.1999թ. թվականից և 2018-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

**7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>**

**Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Մամիկոն Մանուկյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» և «դ» ենթակետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.2, 3.2.6, 3.2.7 և 3.2.8 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

**Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝** *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

**Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ...* :

**Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝** *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

**Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝** *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն*

*օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

**Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝** *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

**Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝** *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:*

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

**7.1. Կանոնագրքի 3.2.2-րդ, 3.2.6-րդ, 3.2.7-րդ և 3.2.8-րդ ենթակետերի խախտման մասով Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում արձանագրել հետևյալը.**

**Կանոնագրքի 3.2.2-րդ ենթակետի համաձայն՝** *Փաստաբանն իրավունք չունի իրավական օգնություն ցույց տալ **երկու կամ ավելի վստահորդի նույն հարցով,** եթե նրանց շահերի միջև հակասություն կա: Փաստաբանը պարտավոր է ցույց չտալ իրավաբանական օգնություն, երբ պետք է ներկայացնի **վստահորդի շահերը** որևէ գործում, և այդ անձի շահերը հակասում են **նախկին վստահորդի** շահերին, բացառությամբ այն դեպքերի, երբ նախկին վստահորդը տալիս է իր գրավոր համաձայնությունը:*

**Կանոնագրքի 3.2.6-րդ ենթակետի համաձայն՝** *Փաստաբանը չի կարող միևնույն գործի վերաբերյալ խորհուրդ տալ, ներկայացնել կամ գործել **երկու կամ ավելի վստահորդների անունից**, եթե վստահորդների միջև առկա է շահերի հակասության վտանգ:*

**Կանոնագրքի 3.2.7-րդ ենթակետի համաձայն՝** *Փաստաբանը պետք է դադարեցնի գործել երկուսի կամ բոլոր շահագրգիռ կողմերի օգտին, երբ **վստահորդների միջև ծագում է շահերի հակասություն և երբ առկա է վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ** կամ երբ փաստաբանի անկախությունը կարող է սահմանափակվել:*

**Կանոնագրքի 3.2.8-րդ ենթակետի համաձայն՝** *Փաստաբանը պետք է հրաժարվի նոր վստահորդի օգտին գործել, եթե առկա է նախորդ **վստահորդի կողմից վստահված գաղտնիքի բացահայտման վտանգ,** կամ եթե այն տեղեկատվությունը, որին տիրապետում է փաստաբանը նախորդ վստահորդի վերաբերյալ, **կարող է անբարեխիղճ արտոնություն ստեղծել նոր վստահորդի համար:***

Կանոնագրքի վերը նշված կանոնների տառացի վերլուծության և համակարգային մեկնաբանության արդյունքում Հանձնաժողովը հանգում է այն եզրակացության, որ Կանոնագիրքը պահանջում է փաստաբանից իրավական օգնություն ցույց չտալ կամ դադարեցնել գործել վստահորդի անունից այն դեպքում, երբ **իր վստահորդի և իր նախորդ վստահորդի, կամ՝ տվյալ պահին իր երկու վստահորդների** միջև առկա է շահերի հակասություն, շահերի հակասության վտանգ կամ **նախորդ վստահորդի** կողմից իրեն վստահված փաստաբանական գաղտնիքի բացահայտման վտանգ կամ **նախորդ վստահորդի** կողմից իրեն տրամադրված տեղեկությունները կարող են անբարեխիղճ արտոնություն ստեղծել նոր վստահորդի համար: Այսինքն Կանոնագրքի խախտում է համարվում փաստաբանի կողմից **միայն վստահորդի** կողմից նրան փոխանցված տեղեկատվության օգտագործումն ընդդեմ այդ վստահորդի, մեկ այլ վստահորդի շահերը պաշտպանելու ժամանակ, երբ փաստաբանի վստահորդի և մեկ այլ վստահորդի շահերը հակասում են: Ընդ որում նման իրավիճակում փաստաբանը պարտավոր է դադարեցնել մեկ այլ վստահորդին իրավաբանական օգնություն տրամադրելը, այդ թվում՝

խորհրդատվություն տրամադրելը և ներկայացուցչություն իրականացնելը: Հանձնաժողովը արձանագրում է այն, որ Կանոնագրքի վերը նշված բոլոր կանոնները վերաբերվում են այն դեպքերին, երբ իրավահարաբերություններում մասնակցում են փաստաբանը, նրա վստահորդը և այլ վստահորդը կամ վստահորդները: **Երբ մասնակիցներից մեկը վստահորդ չէ, նշված կանոնները կիրառելի չեն այդ իրավահարաբերությունների նկատմամբ:**

Տվյալ դեպքում Դիմողի ներկայացուցիչը Հանձնաժողովին է ներկայացրել 2023 թվականի ապրիլի 20-ին կազմված գրություն, որով մասնավորապես նշել է հետևյալը.

*«4. Փաստաբանական գաղտնիք կարող է դիտվել Երջանիկ Հովակիմյանի համաձայնությունը Անժելա Մելոյանին իր տրված հայտարարության դիմաց՝ Երջանիկ Հովակիմյանի ժառանգություն ստացած մասից գույք տալը/նվիրելը/»:*

*5. Փաստաբանը տիրապետել է նման գաղտնիքի, այնուհետև դրանք ձևակերպել է որպես հայցի փաստական հիմքեր, այնուհետև կազմել է թվով 3 հայտարարություններ, որտեղ շարադրել է Երջանիկ Հովակիմյանին փաստաբանական ծառայություններ մատուցելու ընթացքում իրեն հայտնի դարձած տեղեկատվությունը, և դատարանին ներկայացրել է որպես պահանջը հիմնավորող ապացույց:*

Ըստ էության Դիմողը կարծում է, որ Փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում, քանի որ ըստ Դիմողի՝ Փաստաբանը Դիմողին մատուցել է փաստաբանական ծառայություններ, նրանից ստացել է փաստաբանական գաղտնիք հանդիսացող տեղեկատվություն և առանց հաշվի առնելու այն, որ Դիմողը եղել է իր նախկին վստահորդը, հետագայում Անժելա Մելոյանի և Ալինա Հովակիմյանի շահերը պաշտպանելիս, այդ տեղեկատվությունը օգտագործել է Դիմողի դեմ և նրա դեմ հայցադիմում կազմել՝ որպես հայցի հիմք նշելով այդ տեղեկատվությունը:

Մինչդեռ Փաստաբանն իր բացատրությունում նշել է, որ Դիմողը երբևիցե իրեն չի դիմել իրավաբանական օգնություն ստանալու համար, նա Դիմողին փաստաբանական ծառայություններ չի մատուցել, այլ խոսքով՝ Դիմողն իր վստահորդը չի հանդիսացել: Փաստաբանը, թե՛ բացատրությունում և թե՛ Հանձնաժողովի նիստի ժամանակ նշել է, որ իր վստահորդներն են եղել Անժելա Մելոյանը և Ալինա Հովակիմյանը: Ալինա Հովակիմյանը եղել է իր ուսանողը, իսկ Դիմողը Ալինա Հովակիմյանի հորեղբայրն է, որի հետ ծանոթացել է Ալինա Հովակիմյանի հարսանիքի ժամանակ, իսկ Անժելա Մելոյանը Ալինա Հովակիմյանի մայրն է: Անժելա Մելոյանը և Ալինա Հովակիմյանը դիմել են Փաստաբանին Ալինայի հոր ժառանգությունը ընդունելու հարցով: Ժառանգության զանգվածի մեջ մտնող ք. Երևան, Դրոյի փ., տուն 56 հասցեի անշարժ գույքում առկա են եղել ինքնակամ շինություններ: Անժելա Մելոյանը և Ալինա Հովակիմյանը Փաստաբանին հայտնել են, որ Անժելայի հորեղբայրը՝ սույն կարգապահական գործով Դիմողը, պատրաստակամություն է հայտնել ինքնակամ շինությունների կարգավիճակը որոշելու հարցում օգնել նրանց, քանի որ հանդիսանում է Երկրապահ կամավորական ՀԿ-ի Քանաքեռ-Զեյթուն համայնքի

ստորաբաժանման նախագահը, ունի լայն կապեր և կարող է կարգավորել այդ հարցը: Ավելի ուշ, Անժելա Մելոյանի նախաձեռնությամբ, Փաստաբանն իր գրասենյակում հանդիպել է Անժելա Մելոյանի և Ալինա Հովակիմյանի, վերջինիս ամուսնու և Դիմողի հետ, որտեղ Փաստաբանը նույնպես պաշտպանել է իր վստահորդներ Անժելա Մելոյանի և Ալինա Հովակիմյանի շահերը: Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Դիմողը համաձայնվել է, որ իր եղբոր ժառանգական զանգվածը ձևակերպվի իր անվամբ, իսկ հետագայում ինքնակամ շինությունների խնդիրը կարգավորելուց հետո վերադարձնի իր հարազատ եղբոր կնոջը՝ Անժելա Մելոյանին և դստերը՝ Ալինա Հովակիմյանին: Հետագայում Դիմողն իր հարազատ եղբոր կնոջ և դստեր նկատմամբ, ըստ Փաստաբանի, ցուցաբերել է անբարեխիղճ վերաբերմունք, իր խոստումը չի կատարել, ինքնակամ շինությունների խնդրի կարգավորմանն ուղղված միջոցներ չի ձեռնարկել և գույքը չի վերադարձրել:

Արդյունքում Փաստաբանը ստիպված է եղել իր վստահորդների անունից հայցադիմում ներկայացնել ընդդեմ Դիմողի՝ 18.10.2019 թվականի հայտարարության նկատմամբ առոչինչ գործարքի անվավերության հետևանք կիրառելու՝ Երևան քաղաքի Դրոյի 56 տան 5/6 բաժնի նկատմամբ Պատասխանողի սեփականության իրավունքի պետական գրանցումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որի հիման վրա հարուցվել է թիվ ԵԴ/19100/02/22 քաղաքացիական գործը:

Փաստաբանը նաև իր բացատրությանը կից ներկայացրել է Անժելա Մելոյանի և Ալինա Հովակիմյանի հետ կնքված իրավաբանական ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրեր և նրանց կողմից իրեն տրամադրված լիազորագրեր, որոնցով հաստատվում է, որ Փաստաբանի վստահորդները հանդիսացել և հանդիսանում են Անժելա Մելոյանն ու Ալինա Հովակիմյանը, իսկ Դիմողի՝ Փաստաբանի վստահորդը երբևէ հանդիսանալու վերաբերյալ ապացույցներ առկա չեն:

Փաստորեն ստացվում է այն, որ Դիմողի ներկայացուցչի կողմից վկայակոչված փաստը, այն է՝ Դիմողի համաձայնությունը Անժելա Մելոյանին իր տրված հայտարարության դիմաց՝ Դիմողի ժառանգություն ստացած մասից գույք տալը/նվիրելը, որպես տեղեկատվություն, Փաստաբանը չի ստացել իր նախորդ վստահորդից, այլ ստացել է իր վստահորդներին իրավաբանական օգնություն ցույց տալու շրջանակներում: Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց առ այն, որ եղել է Փաստաբանի նախորդ վստահորդը կամ հանդիսանում է Փաստաբանի վստահորդն այժմ կամ ժառանգության զանգվածն իր անունով ձևակերպելու հարցով իրավական օգնություն ստանալու համար դիմել է Փաստաբանին, մինչև Անժելա Մելոյանի և Ալինա Հովակիմյանի դիմելը կամ թեկուզև դրանից հետո: Դիմողը չի ներկայացրել որևէ ապացույց, որով կհերքվի Փաստաբանի բացատրությունում նշված փաստերը: Դիմողը, պատշաճ ծանուցված լինելով Հանձնաժողովի նիստի օրվա, ժամի և վայրի մասին, նիստին չի ներկայացել:

Նման պայմաններում, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում փաստացի բացակայում են Կանոնագրքի 3.2.2-րդ, 3.2.6-րդ, 3.2.7-րդ և 3.2.8-րդ

ենթակետերի, ինչպես նաև Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» և «դ» ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները, քանի որ նշված կանոնները կիրառելի են միայն փաստաբանի կողմից **իր վստահորդից** ստացված տեղեկատվությունը օգտագործելու դեպքերին, մինչդեռ Դիմողը Փաստաբանի վստահորդը չի հանդիսացել:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբանը չի օգտագործել իր նախկին կամ ներկա վստահորդից ստացված փաստաբանական գաղտնիքը մեկ այլ վստահորդի շահերը պաշտպանելիս և անբարեխիղճ արտոնություններ չի ստեղծել իր նոր վստահորդի համար, ինչպես նաև գտնում է, որ սույն կարգապահական գործի քննությամբ չի ապացուցվել, որ Դիմողը հանդիսացել է Փաստաբանի վստահորդը, որպիսի պայմաններում Փաստաբանին վերագրվող վարքագծում ըստ էության բացակայում են Օրենքի և (կամ) Կանոնագրքի պահանջների խախտման հատկանիշները:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Հանձնաժողովը

***Ո Ր Ո Շ Ե Ց՝***

***1. Փաստաբան Մամիկոն Էդուարդի Մանուկյանի (արտոնագիր՝ թիվ 349) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, 20-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի «ա» և «դ» ենթակետերի, ինչպես նաև Կանոնագրքի 3.2.2, 3.2.6, 3.2.7 և 3.2.8 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-23010 կարգապահական վարույթը կարճել:***

***2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:***

**<u>Ծանոթություն.</u>** Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն Փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

**ՀՀ փաստաբանների պալատի**
**կարգապահական հանձնաժողովի**
**նախագահ՝** **Տաթևիկ Շալջյան**

**թիվ ԿԳ-23010-2-Ա**
**22 հունիսի 2023թ.**
**ք. Երևան**